

ընդառաջ զնալու նահապետին : 82 տարեկան կայտառ նահապետը պարուրած իր երկայն եւ դեղազարդուած արային մէջ եւ ոսկեկոթ խոչոր դաշոյնը խրած դեղեցիկ չալէ գօտիին մէջ, մօտեցաւ արագ քայլերով եւ քամանայէն յետոյ ձեռք պարզեց սեղմելու : Գիւրդ ցեղապետները դեռ մինչեւ վերջին ժամանակներս սովորութիւն չունէին ձեռք սեղմելու, բայց ինչպէս պիտի տեսնենք շուտով, Բագրանցոց նահապետը մի բացառիկ տիպ էր : Ներս մտաւ վրանի տակ, մեկդի նետեց արան եւ բազմեց կենդրոնական օթոցին վրայ հրաւիրելով ինձ նստիլ իր կողքին : Թօռունների խումբը, ինչպէս նաեւ Մամատ Աղայի հետեւորդները շարուեցան վրանի ամբողջ երկայնքին եւ մի քանի բուլէ տրեց լուսթիւն, միմիայն կողմնակի փափուտքներ երկու դրացիներու միջեւ : Ինքին ճաշակով պատրաստած սուրճ՝ միմիայն գլխին նստող «մեծաւորների» համար :

Մամատ Աղան սկսեց պատմել այսօր իր այցելած ձիերի յատկութեանց, քուռակների որակի եւ քանակի մասին : Իր գայրոյթը յայտնեց որ հարիւրներով անասուններ ստակած կամ հիւանդ էին մինչեւ Սասուն հասնող պաշարախտի հետեւանքով, եւ թէ «Դավիթը» չէր կրնար արտին առաջն առնել : Ապա դարձաւ ինձ հարցնելու, թէ երբ մեկնած էի Բաղեշն, որ ճամբով եկած էի եւ թէ ինչպէս գտայ երկիրը «Հուրիաթի» շրջանին : Նահապետը թիւրքերէն կը խօսէր բաւական ընթացիկ, բայց արարախառն . այն ժամանակ կարող էի խօսել ընթացիկ քրդերէն, բայց ընդունուած սովորութիւն էր այսպիսի առիթներով միշտ խօսել թիւրքերէն :

Այս մեծ վրանը կը ծառայէր իրրեւ հիւրանոց մօտ 15 քառակուսի կանգուն, մուտքը բացուած դէպի արեւելք : Մրա երկայնքին եւ սպա ետեւը կան մի շարք ուրիշ վրաններ, բէգերի, կանանց, ծառաների, խոհանոցի եւ այլն համար : Դուրս՝ հրապարակին վրայ կը վառի մի մեծ խարոյկ, արձակելով առատ ճամուշներ զոնարաց վրաններէն ներս : Այս բարձունքների վրայ առաւօտներ եւ երեկոններ ցուրտ են : Ամսոյս վերջերը Բագրանցի աշիւթը պիտի սկսի շարժիլ դէպի հարաւը, դէպի Գաբլիճօշ եւ Բաթմանսուի տաք շրջաններ հանդերձ հօտերով եւ վրաններով : Առ հասարակ Մամատ Աղան պահեց վերապահ դիրք մինչեւ ճաշի վերջը, երբ ներկայ էին 12 կամ 13 թօռուններ եւ հրամանատարներ :

Նա կը խօսէր քիչ եւ զրոյշ ստորեւ բացատրելի պատճառներով :

Առաջին բուլէէն զգացի որ Մամատ Աղան, Բագրանցի ցեղապետը եւ 4000—5000 այրուձի կոտլի դաշտ հանելու ընդունակ հրամանատարը մի փորձառու քաղաքագէտ էր :

(Շարունակելի :) Ա. ՍԱՅՐԱՍՏԵԱՆ



ՅՈՎՀԱՆՆԻՍ ԱՅՎԱԳՈՎՍԿԻ
ՃՈՎԱՆԿԱՐԻՉ

ԻՐ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹԻՒՆԸ

(Շարունակութիւն եւ վերջ :)

Ի Գ .

ԱՅՎԱԳՈՎՍԿԻԻ ԳՊՐՈՅԸ

«Այլազովսկի մասնաւոր զօրոց մը բացած էր ծովանկարչութեան, որմէ ելած են... անուանի ծովանկարչներ»¹ : Այլազովսկի աշակերտներու մէջ նշանաւոր հանդիսացան Լազորիոյ, Բողոլիւրով, Սուզկով եւ Կուլինջի (Գուլումձի), որոնց առաջինը սպա Պետերբուրգի նկարչութեան ձեմարանի մէջ ուսուցչակազմ կարգուեցաւ :

Լազորիոյ Այլազովսկիի ձեռքին տակ զարգացուց իր տաղանդը : Ինքն եւ Կուլինջի, որոնց յորեկար Այլազովսկի արեւաշատութիւն մազթած էր երբեմն, իրենց ստեղծագործութիւններու մէջ երեւան բերին ինքնայատուկ նկարազիր մը : Մինչ առաջինը Վարպետին մասնաճիւղը յառաջ տարաւ, ինքնուրոյն բան մը զննելով իր ճաշակէն, միւսը հռչակ հանեց աւելի գաշտանկարչութեան մէջ :

Իրենց արտադրութիւններու մէջ աւելի Սուզկով եւ Բողոլիւրով մտերիմ են իրարու, քան Կուլինջի եւ Լազորիոյ : Մինչ Լազորիոյ եւ Կուլինջի իրենց համար իտալական մոտիւնք կ'ընտրեն, Սուզկով եւ Բողոլիւրով կը սիրեն գործել Կաւկասեան երկիրներու ներչնումին տակ : Վերջիններու քով նկատելի է հաւասար ճիգը Վարպետին լուսավառութիւններն ու թանձր ստուերները, անոր խաղաղութիւնն ու ալեկոծութիւնը, անոր անտառուտ եւ ձիւնապսակ գաղաթները վերաբ-

¹ Սարուխան, Հանդ. Ամս., 1900, էջ 187 :

տաղրելու, ի հարկէ միշտ իրենց սեփական տաղանդին թռիչքով :

Այլազովսկի ուրիշ կարող աշակերտներ այ ունեցաւ . անոնք փայլեցան Վարպետի մայրամուտքին ինչպէս փողփողուն աստղեր : Պիտի յիշեմ այն դէմքերն միայն, որոնք թէպէտ չկրցան երկար վայելել Վարպետին առաջնորդութիւնը, բայց մնացին կապուած անոր ուղղութեան :

Էմմանուէլ Մահդեմեան Խրիմի ափերուն վրայ ծնած (1857) եւ մեծցած էր : Աշակերտելով Այլազովսկիի՝ ընդունած էր անկէ հրահանգներ, արուեստին գաղտնիքներուն թափանցելու : Արդէն ընդունակ ի բնէ կրցաւ շուտով իւրացնել արուեստին ըմբռնումը եւ դարձանալ սեփական ուղղութեամբ : Նա ձեմարանը աւարտեց 1888ին : Իր բաղձաթիւ նկարներուն մէջ նշանաւորայինն են Գիշերը Սեւ ծովի վրայ, Աղալարի Անճրեւեմ ետքը եւ Հողմը կը սաստկանայ :

Գեորգ Բաշինջաղեանի տաղանդը նուիրուեցաւ հայ հողին, հայ ջուրին : Նա սիրեց մեր հովիտներու վայրէջքը, մեր ամայութիւնը, քարքարուտ առապարները : Նա մեծ յաջողութեամբ պատասխի վրայ փոխադրեց ձիւնապատ Արարատը, ներկայացուց նախադարունի խրատիւնները, ձիւնահալքը, փըթթումը, տերեւթափն ու հերկը :

Վ. Սուրեմեան կը հմայուի հայ կեանքով, հայ շինուածքներով . կը փորձէ նոյն խի մարմնաւորել հայ զիւցաղնական վէպ մը : Իր մէջ հզօր արասայայտութիւն է յղացումը : Նա այնպէս թափանցած է արեւելեան շինարուեստի, տարազի ծալքերուն, այնպէս քաջ ծանօթ մըն է արեւելեան բարբերու եւ կենցաղին, որ ստիպուած ենք բացառիկ տեղ տալ իրեն պատմա-գեղարուեստական արուեստագէտներու շարքին : Յիշենք իր գործերէն «Արայ Գեղեցիկն եւ Ծամիրամ» . «Սաչվերաց տօն է էջմիածնում», «Ս. Հոխիսիմէի վանքը» եւն :

Նոյն ուղղութեան հետեւեցաւ Ա. Յէրվանեան :

Իսկ Ս. Շամշինեան (ծն. 1856, Թիֆլիս) մշակեց Հայ Կաւկասի սպորտիստներն ու սովորութիւնները : Իր գործերուն մէջ բնականութիւնն եւ գունաւորման արուեստը մասնաւորաբար արժանացան զնահատուկութեան : Իր նկարներն՝ «Թիֆլիսի Շէյթանբազարը», «Ղէյսօրա» եւ «Օրս» հրաշալի եւ կենդանի վերարտադրութիւններն են տեղա-

կան սովորութիւններու, կենցաղի եւ տաղաղի :

Գ. Գաբրիէլեան (ծն. 1863, Թիֆլիս, † 1898, Մայիս 11, Վարչաւա) զարմացուած է իր «Հայ բանուրը», «Արեւ կը ծագէ», «Օրօրոցի մօտ» նկարներով : Դժուար է ըսել թէ ինչ յարաբերութեան մէջ պարած է սա Այլազովսկիի հետ, եւ ի՞նչ չափով ազդուած է անկէ :

Ձեռք ուղեր անյիշատակ թողուլ ժամանակակից հայ հզօր դէմք մ'ալ, Ժ. Տամատ (ծն. 1839, Կ. Պոլիս) : Թէպէտ իր մէջ ծովանկարչութիւնը չհասաւ այն բարձրութեան, ուր կը գտնուի Այլազովսկի, բայց նա մէկն է այն տաղանդներէն, որոնք կարող են հակակռէլ Կաթիկոֆի, Պրոկոֆիէվի ստեղծագործութիւններու այժմ ու թափը : Կարժէ որ այս նկարչին դէմքը աւելի մօտէն ուսումնասիրուի :

Այլազովսկիի ազդեցութիւնը սահմանափակուած չէ խումբ մը արուեստագէտներու մէջ . ամբողջ աշխարհի ժամանակակից նկարչներու վրայ ազդեց նա որոշ չափով : Յուցահանդէսները, զորոնք տուաւ Այլազովսկի քաղաքակիրթ աշխարհի կարեւորագոյն կենդրոններու մէջ, իր նկարները, որոնք ցրուեցան ամէն ուղղութեամբ եւ գրաւեցին պատուաւոր տեղ թէ հասարակաց թանգարաններու եւ թէ մասնաւորներու ապարանքներու մէջ, եղան, են եւ պիտի ըլլան խօսուն օրինակներ Մեծ Վարպետի Դպրոցին ուղղութեան : Գեղարուեստագէտները չկանգնեցան միայն անոնց սովեւ ախնայիչ նայելու եւ զարմանալու արուեստին կատարելութեան եւ հմայքին վրայ, այլ եւ աշխատեցան թափանցելու արուեստին թաքուն ծալքերուն, ըմբռնելու արուեստին արուեստը : Այսպէս Այլազովսկիի Դպրոցը կը շարունակէ իւր գոյութիւնը, կը ներշնչէ արուեստագէտներ եւ կը յարուցանէ նոր աշակերտներ : Եւ ո՞ր ծովանկարչն է, որ չէ գտնուած Այլազովսկիի հմայիչ ազդեցութեան տակ :

Ի Գ .

ՅՈՎՀԱՆՆԻՍ ԱՅՎԱԳՈՎՍԿԻԻ ՀԱՅՐԵՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Արուեստագէտին կեանքի ճանապարհներն եւ հոգեկան ապրումներն ուսումնասիրելու համար մեր ձեռքը իբր վաւերական աղբիւր պիտի ծառայէին անոր նամակները, զորոնք գրած էր իր երկար կեանքի օրերուն : Դժբախ-

տարար մինչև օրս չեն հրատարակուած անոնք առանձին հաւաքածոյքով: Ինձի ծանօթ է չորս հայերէն նամակ¹, գրուած խորհրմահայ բարբառով: Ասոնք խօսուեն վկաներ են թէ ինչպէս Այվազովսկի իւր յառաջացած տարիքին մէջ անգամ փարած է իւր մայրենի լեզուին եւ կը սիրէ թոթովել անով: Թէև Կեանքին մեծագոյն մասն անցուցած է չըջապատուած օտարներով:

Այստեղ յառաջ կը բերեմ երկու նամակ, երկուքն ալ գրուած իւր Բարեկամին Գէորդ Այվազովսկին ի Կ Պոլիս: Յառաջ բերու թեանս նպատակն է ճաշակ մը տալ Մեծ Վարդեանին մայրենի լեզուին. ուր թէպէտ պարզ է արտայայտութեան ձեւը, բայց սրտէ կը բղբեն խօսքերը: Մայրենի լեզուին նուազ ծանօթութեան զիտակից է նամակագիրը:

Ա.

Բեթերպուրդ Հոկտ. 24—նոյ. 6 (1881):

Մերելի եւ պատվական եւրպրք Այվազովսկի. Այսօր ստացա ցեր սիրուցն նամակը. շատ եւ շատ շնորհակալ եմ հրամանոցը վոր ինձ մոռացած չէզ ու ինչպէս որ իսկ բարեկամ սրբաանց կը շնորհակամարտու. ճշմարտութիւնն որ մեծ պատիվ տեսա կատելի կողմանէ, բոլոր Բեթերպուրդի ժողովուրթէ եւ բոլոր ուստիեան. ուրիշ տերութիւններէ: Ան երկու օրը ըստացայ) բոլոր ուստիեան 440 telegram, ուրիշ երկիրներէն Իթալիեան. Բարիկէն. Ղեռմանիեան. Անգլիեան 138 տէրէջ շատ ընծաներէն:

Հինկ օր առաջ աստեղի ծովախ 30 ամսիւնները տուին ինձի grande diné. ինչպէս որ կ'ըսեն ծերերը այսպէս Jubilé եղած էր Բեթերպուրդի մէջ. այս ժամանակ հոտ վեր տեսա մէկ պատկեր մեր աստեղի լուսավորիչ եկեղեցիին այս ամառ քաշեր էի:

Պօլիսէն ալ ստաց քանի մը telegram: Կ'աղաչեմ հրամանոցը բարեկամը մէկն իմ բարեկամներէ:

Աստուած տա կարելի է վոր եկած տարի մէջ մը դամ Պօլիս: Աս ծրմեա մինչև մատուի 20 կը մընանք Բեթերպուրդ. վերջը կը թառնանք Սըբըմ. մնամ ցէր սրտանց բարեկամ՝ Յովհաննէս Այվազովսկի:

Թողութիւն խընթեմ այսպէս նամակիս, չի գտիմ գրել. աղէկ է կեր կրնազ կարթալ ու հասկընալ: Իմ ատուէսը S. Petersburg, Pont Anitchkoff, maison Zibatchof, J. Aivazovsky.

Բ.

Բեթերպուրդ 3/15 Բեռլի. 1882:

Մերելի եւրպրք Այվազովսկի. —

Մեզավոր եմ շատ ցեր զիմացը վոր մինչև օրս օրըս տահա պատասխան գրած չեմ ցեր սիրուցն նամակին: Երեք ամիս է վոր աստեղն ենկ. մատուի վերջերուն Աստուած անող է նէ կը թառնանք Սըբըմ Գէորդէ:

Պօլիսէն էլլածնէս վերջը կուզէի կատարել ինչ վոր խոտացել էի՝ հրամանոցը ալ հայտնի էր. ժամ

¹ Հմմտ. Բաղմալէպ, 1929, էջ 72—73:

մանակավոր ցրելուս պատճառը ան էր որ անոակ տեսակ լուրերը անդիտութեան ցեր մայրաքաղաքը, պատճառ եղան. հիմա վոր ինչպէս կերելի բարի հանկատութիւնը նորէն տեղը առաւ. ինչ վոր հարկավոր կը տեսնուզ ինձի իմաց տալ. զըրեցէզ տեղով: Իմ միթըս է եւ կուզեմ կատարել ինչ որ ուզացել էր վեհաու կատարը Սուլթանը. իրեն զիս ընթուանածը ան կերպով ինձ համար մեծ մեծ պահատուութիւն էր:

Միւրէի բաշին եւ Էմին պէին կը խըրկեմ մէկ մէկ բողբիկ պտուկերն. ասունը կը խըրկեմ Թէոսոսիս թառնալէս վերջը: Այս բողբիկ նամակը կը խընթեմ հասցունուզ վահան էֆէնախին աղջիկներուն:

Այս գիրքիս պատասխանը խըրկի Թէոսոսիս. կարծեմ ալլելի սոյաճով կ'ըլլա ժամանակ ալ կուեննուզ տեղով իմանալ վերը ինչպէսին ինձի համար. եւն:

Կը խընթեմ ընթուանիք իմ շատ բարեկամ. Սերգիւս պէյի տեսնելը իմ շատ...

Մնամ ցեր բարեկամ

Յ. Այվազովսկի:

ԻԵ.

Ո՞՞՞՞ ԵՆ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ ԵՎ ԱՐՄԵՆԻԱ

Երբ կը հրատարէր Այվազովսկի ՏՅամեայ հասակին այս աշխարհէն, կրնար վստահաբար ըսել թէ կը թողուր իր անուան յիշատակ աւելի քան 5000 իւզանկար: Ճիշդ թիւը անշուշտ ինքն ալ չէր գիտեր:

Ո՞ւր են այժմ այդ նկարները: Ահա հարց մը, որուն շատ դժուար է պատասխանել: Եւ կարող են երբեք նկարչի մը արտաբերութիւններն ունենալ իրենց տեղը մէկ յարկին տակ: Եթէ գտան անոնք մուտք պետական կամ քաղաքային թանգարաններու մէջ, կարելի է խօսիլ տեղւոյ մասին: Բայց որչափ նկարներ զրկուած կայուն բնակարանէ թափառական կը չըլին աշխարհի աշխարհ, ապարանքէ ապարանք, ձեռքէ ձեռք:

Այվազովսկի երբ կը ցուցադրէր իւր նկարները Եւրոպայի, նաեւ Ամերիկէի եւ Ամերիկայի սրահներու մէջ, կը մըցէին գնորդները իրարու հետ: Նկարչին անգամ անծանօթ կը մնար այնուհետեւ իր ստեղծագործութիւններու բախտը:

Այսպէս դժուարին է թէպէտ յանուանէ մատնացոյց ընել Այվազովսկիի աւելի քան 5000 նկարներու պահեստի տեղերը, կրնանք սակայն թուել այն գլխաւոր կենդրոնները, որոնք մեծ թուով հիւրընկալած են Արուեստագէտին գործերը:

Առաջին աշխարհը, ուր ամէնէն աւելի կրնանք փնտռել Այվազովսկիի նկարները, Ռուսաստանն է. հոս ծնած էր նկարիչը, հոս

կատարելագործած իր արուեստը եւ հոս վայելած ինքնակալներու պաշտպանութիւնը:

Այվազովսկիի լուսագոյն գործերը կը գըրտնուին Պետերբուրգի Գեղարուեստի Ճեմարանին, Արքունի Պալատան եւ Մոսկուայի Քաղաքային Թանգարանին մէջ: Մեծ թիւ մը նկարներու կը զարգարէր Այվազովսկիի սեպհական Թանգարանը Թեոդոսիայի մէջ: Կրնանք յիշել հոս նաեւ Թիֆլիսի եւ Երեւանի Թանգարանները, ինչպէս նաեւ Սեւաստուպոլի Թանգարանը:

Եւրոպայի քաղաքներէն Վեներտիկ, Փարիս, Հոնոմ, Բեռլին, Միւնխէն եւ Կ. Պոլիս կ'ամփոփեն իրենց թանգարաններու մէջ Այվազովսկիի նկարները առաւել կամ նուազ թուով. առանց յիշելու մասնաւորներու հաւաքածոյքները, ինչպէս օր. համար Ս. Ղազարու Միխիթարեան Հաւաքման 10 կտորները:

Նոր Աշխարհին հետաքրքրութիւնը արդէն նկարչին կենդանութեան արթնցած էր. Նիւ-Եորքի ցուցահանդէսի ժամանակ շատ թանգարաններ աշխատած էին ձեռք բերել Այվազովսկիի գործերէն:

Ո՞րչափ փափագելի պիտի ըլլար, եթէ ձեռնարկուէր կազմել Այվազովսկիի գէթ նշանաւորագոյն գործերու ալբոմը:

ԻԶ.

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԱՐՄԵՆԻԱ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ ԵՎ ԱՐՄԵՆԻԱ

Այվազովսկիի կենդանութեան արդէն տրտունջ կար հայ ժողովրդեան մէջ, թէ Նկարիչը իւր ուշադրութեան առարկայ չ'ըներ հայ աշխարհն եւ հայ կեանքը:

Սաոյգ է, թէ Այվազովսկիի ապրելով հայ աշխարհէն հեռու, հայրենի տեսարաններէն, հայ ժողովրդեան նիստ ու կացէն եւ առ հասարակ հայ կենցաղէն չէ ներշնչուած իւր նկարներուն մէջ: Մովանկարիչը սակայն չէր կրնար Հայաստանի բարձունքներու վրայ ալիո՞ծ ծով փնտռել: Այս պատճառաւ ալ հեռու ցամաքէն չըլնցաւ ծովեզերները, եւ մնաց ջուրին սիրահար:

Թէպէտ չցուցադրեց իւր պատասխանը վրայ Հայաստանի լեռներն ու հովիտները, բայց երեւան բերաւ հոն հայ ազգին ընդունակութիւնները: «Նա իւր զիւթիչ վրձինով մեծ պատիւ բերեց Հայոց ազգին. եւ այդ բանը թոյլ եմ տալիս ինձ համարել անգուզական

ծառայութիւն»¹ Թէ իւր Ազգին եւ թէ հայ աշխարհին:

Բայց եւ այնպէս Հայ աշխարհի փառքը, սպիտակափառն Մասիս չորս անգամ է աւելի երեցած է Այվազովսկիի նկարներուն մէջ: Իսկ «Ատանայի ջարդը» (տեղի ունեցած 1896ին) երեւան կը բերէ ահուկ տեսարանին հետ նաեւ Նկարչին ոգւոյն զայրոյթը:

ԻԿ.

ՄԻՏԱԼՆԵՐ ԵՎ ՏԻՏԱՆՆԵՐ

Իւր 60ամեայ գործունէութեան ընթացքին 120 նկարահանուէս տալու փառքն ունեցաւ Այվազովսկի: Ոչ մէկ պետութիւն չէր ուզեր զրկուած գտնուել անոր վրձինի հրաշակերաներէն:

Վրձինը երկնային կրակներու մէջ թաթխած այսպիսի հանճար հարկաւ պիտի պաշտուէր բոլոր ազգերէն. ու նա արդարօրէն վայելեց այն շուայ փառքը, որ շուքի պէս ընկերացաւ իր քայլերուն:

Կը թուենք հոս այն շքանշաններն ու տիտղոսները, զորոնք ընդունեցաւ Այվազովսկի յընթացս իր 60ամեայ գործունէութեան:

1. Պետերբուրգի Ակադեմիան բաշխեց իրեն 1835ին Արժաթեայ Միտալ մը, առթիւ անոր առաջին նկարահանուէսին:

2. Նիկոլայոս Ա. պատուեց զինքը 1837ին ոսկի միտալով:

3. Երբ 1839ին աւարտեց Գեղարուեստից ձեմարանը, անուանուեցաւ «Առաջին կարգի նկարիչ»:

4. Գրիգոր ԺԶ. Քահանայապետ Այվազովսկիի նուէրն՝ «Քառս» փոխարկնեց Ռսկի միտալով:

5. Պարիս 1843ին առթիւ Այվազովսկիի քացած Նկարահանուէսին Գաղղիական Ինստիտուտը պատուեց Նկարիչը Երրորդ կարգի ոսկի միտալով:

6. Նոյն տարին Հոլլանդական ձեմարանը անուանեց զինքը «Պատուոյ Անդամ»:

7. «Ակադեմիկոս» տիտղոսով պատուեցաւ (1844) եւ Նիկոլայոս Ա. ի շնորհներու արժանացաւ:

8. Պետերբուրգի Գեղարուեստի ձեմարանը անուանեց զինքը «Ուսուցչապետ»:

9. Պարիս 1857ին առթիւ Բ. Նկարահանուէսին պատուեցաւ «Պատուոյ Լեզնի» շքանշանով:

¹ Բաշխեցապետ, Ա. ն. հ. տ., 1900, էջ 161:

10. Նոյն տարին ներկայանալով Նապոլեոն Գ.ի՝ ստացաւ Ռսկի Միտալ:

11. Սուլտան Ապտուլ-Ալիզ շնորհեց «Օսմանիէ» ազամանդազարդ շքանշանը:

12. Առթիւ նկարչական գործունէութեան Յիւնամեակին Պետերբուրգի Ակադեմիան առաջնեց զինքը «Պատուոյ Անդամ». եւ ի պատիւ նկարչին Միտալ կտրեց:

13. Վաթնամեակի տօնախմբութեան առթիւ անուանուեցաւ «Գաղտնի Սորհրդական». Նիկողայոս Բ. պատուեց «Աղեքսանդր Նեւսիկ» շքանշանով:

Շքանշաններու, Պատիւներու եւ Տիտղոսներու այս թիւը անշուշտ լրիւ չէ: Անոնք չչլացուցին համեստ նկարիչը, եւ ոչ ալ թուլացուցին անոր ձեռքերը: Վրձինը, որ ծնիչն էր իր փառքին, մնաց իր մատներու մէջ մինչեւ կեանքին վերջը: Սիրեց աշխատանքը. փառքը բնկերացաւ արտադրութիւններուն:

Գեղեցիկ ըսած է իրեն համար Թէոփիլ. «Կարելի է անխնայ դրուատել զինքը, որովհետեւ դրուատիքն իրեն համար վտանգաւոր չէ»¹:

ԻԸ.

ԾԱՂԿԵՓՈՒՆՁ

ՀԱՆՃԱՐԻ ԿԵԱՆՔԷՆ ՈՒ ԳՈՐԾԵՐԷՆ

Այվազովսկի օր մը ծովափին կը նկարէր ձկնորսի մը խրճիթը, պատերէն կախուած ուռկաններով միասին: Ծեր ձկնորսը, որուն կը վերաբերէր տնակը, նկատեց նկարիչն եւ մօտեցաւ անոր. հետաքրքրուած հարցուց, թէ քանի՞ կը նայ ծախել այդ նկարը երբ աւարտէ:

— Գործը զիտէ, պատասխանեց Այվազովսկի, ամէնէն նուազ՝ 5000 ռուբլի:

— Ինծի այդ գումարին կէսը տուէ՞ք, ըսաւ ձկնորսը, ես ձեզի տնակս ալ, ուռկանս ու նաւակս ալ մէկտեղ կու տամ:

Հարցուցին Այվազովսկիին, թէ քանի՞ փոփոխակներ կը նայ յառաջ բերել մէկ տեսարանէն. նա պատասխանեց.

— Ի՛նչ ըսեմ, համարէ 300:

Գ. Բաշինջաղեան հարցուց օր մը թէ ինչո՞ւ Մ... նկարիչը այնքան կը պատուեն,

¹ Ամենուն օրացոյցը, 1912, էջ 238:

որուն արժանի չէ, նա ծիծաղելով պատասխանեց.

— Ուզում են, որ օտարը հայից լաւ լինի:

Երբ Այվազովսկիի ստեղծագործութիւնը զարմանք պատճառեց իր աշխատանքը դիտող հայու մը, եւ սա զմայլած գոչեց «Ի՛նչ բնական տեսարան», աշխատող վարպետը յարեց.

— Իրօք բնութիւնն է եղել իմ վարպետը միշտ, թէեւ պատահել է, որ Երբեմն նրա խորտ ու բորտ կողմերն ուղղելու յանդիմութիւնն եմ ունեցել, արուեստի հմայքը նրան աղղելու համար:

(Վերջ:)

Հ. ԱՆԴՐԵԱՍ ԽԸՐԼԱԳԵԱՆ



ՍԱՆՈՍԵԱՆՔ

Հանդէս Ա. մ. օր. ե. յ, 1933, էջ 318—333 խօսած էի Ղարախոզեան տոհմին, յատկապէս անոր երկու անդամներու՝ Պետիկ-Պետրոս եւ Սանոս եղբայրներու վրայ, որոնք նշանաւոր հանդիսացած էին Հալէպի եւ Կարնոյ մէջ:

Այն ժամանակ ուշադրութենէս վրիպած էր 1668ին գրուած Յիշատակարան մը Դաւիթ զբնի ձեռքէն, որ լոյս կը սփռէ Սանոսի տան վրայ:

Յիշատակարանս արտադրած է Գարեգին Վ. Սրուանձտեանց փոքրագիր մագաղաթեայ աւետարանէ մը, զոր տեսած է Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղեցւոյ մէջ¹: Ամբողջութեամբ յառաջ կը բերեմ հոս այս Յիշատակարանը, որ պիտի ընդարձակէ մեր տեղեկութիւնները Սանոսեանց տոհմածառի մասին:


«Սաւճայ Սանոսի որդին Պետրոս Զէլէպին մեծաւ յուսով եւ փափազանաւք ես ծրագրել զսուրբ Աւետարանս ի հալալ ընչից եւ յարդար վաստակոց, յիշատակ իւր եւ հարցն Սանոսին, մարն նանային, հարեղարարն հաւնայ Պետիկին եւ կողակցուն Ղուտրաթին, դստերն Շահնիմարին եւ քուերն Նագխաթունին... ի թվ. ՌՃ. եւ ԺԷ. յունիսի ամսոյ ԻԵ. ձեռամբ Դաւիթ ծրողի»:

¹ Թորոս Աղբար, Բ., էջ 440:

Ուշադրութեան արժանի է որ յիշատակագիրը անտեսած է հոս Սանոսի որդին, ուստի եւ Պետրոսի եղբայրն Սաւնդար. եւ զարձեալ Պետրոսի մայրն կ'անուանէ Նանա, մինչդեռ Սքանդարի մայրն էր Շահնիլիք Սաթուն (Հանդ. Ամս., 1933, էջ 332): Պիտի հետեւցնենք թէ պարոն Սանոս երկու անգամ ամուսնացած է. առաջին կինն էր Շահնիլէք, որմէ ունեցած է Սքանտարը, եւ երկրորդն՝ Նանա, որմէ ծնած է ի Կարին՝ Պետրոս:

1678ի յիշատակարանին (տե՛ս անդ 333) համաձայն Պետրոս ունեցած է որդի մը, զոր անուանած է ի յիշատակ հօրը՝ Սանոս: Կեանքը թէ 1668ին դեռ չէր ծնած Սանոս:

ՍԱՆՈՍԵԱՆՔ ՏՈՂԱՄԱՆՈՒՆ Է ՂՍՏ ԱՅՍՄ



ՀԻՆ ԵՐԵՐԱՆԵՐ

Այս խորագրի տակ հրատարակ հանեց իւր բազմաթիւ գրական երկասիրութիւններով ծանօթ Երուանդ Շակաղիկ նոր աշխատութիւն մը¹, որ արժանի է ուշադրութեան: Հայաստանի քաղաքներու պատմութեան հետ անձուկ կապուած է երկրին քաղաքական, անտեսական եւ կրթական պատմութիւնը: Իսկ Երեւան մասնաւորապէս նոր դարու սեմոց վրայ կը ցցուի իրբեւ անկիւնաքար մը, որուն շուրջը կը յաճի Կովկասի, բայց յատկապէս հայ կեանքի նոր եւ նորագոյն պատմութիւնը:

Աչըղ Զիւանի երգած է.

¹ ԵՐՈՒԱՆԻ ԾԱՀԱՁԻՁ, Հին Երեւանը: Երեւան 1931, 8⁰, էջ 264 [Հրտ. Մեղրոնեան Փոնդի]:

Մեր նահանգի թաղուհին ես, պարծանքն ես. Բարիքներով լեցուն Երեւան քաղաք. Համարեա Կովկասի հողին ես, կեանքն ես. Ունիս բարձր անուն, Երեւան քաղաք:

Այս պատճառաւ ալ ուրախ սրտով կ'ողջունենք Ե. Շահաղիկի երկասիրութիւնը իրբեւ մենագրութիւն, որ առաջին ամփոփ դրութիւնն է նուիրուած այժմեան Սորհրդային Հայաստանի մայրաքաղաքին անցեալ պատմութեան:

«Մենք յաւակնութիւն չունինք եւ չենք ունեցել, կը դրէ հեղինակը, մեր այս աշխատանքը Հին Երեւանի լիակատար, պատմագրական գիտութեան վերջին խօսքին համապատասխան մի գործ համարել, այլ մի փորձ, որ պարունակում է իւր մէջ ազազայում գրվիլիք մի այդպիսի պատմութեան բոլոր տարբերքը» (էջ 5): Այս համեստ խոստովանութեամբ, զոր կ'արձանագրէ հեղինակը գործին սկիզբը, չի տուժեր աշխատութիւնը իր արժէքէն. բայց կը գտնենք հոն համառօտ ուրուագիծը, որուն համեմատ կը խորհի հեղինակը կառուցանել իւր շինուածքը. այս ինքն աւելի շտեմարան մը նկատի ունի պատրաստել, համարելու հոն առաղձներ ապագայ մեծագործ շինուածքի մը համար, քան ինքնին այդ շինուածքին հիմը դնել:

Նիւթեր, գործնք հաւաքած է այստեղ, եւ կամ քաղաքի պատմութեան աղբիւրները, գործնք մատնանշած է, պիտի նպաստեն ապագայ պատմագրին՝ նոր լրացումներով եւ վերլուծութիւններով յօրինել Երեւանի իսկական պատմութիւնը: Մինչեւ այժմ անոնք, որոնք փորձած են գրել Երեւանի պատմութիւնը, կատարած են իրենց հետազօտութիւնները առաւելագոյն չափով յեցած գրական աղբիւրներու վրայ, քան պատմութիւնը տեղւոյն վրայ ուսումնասիրելով: Ե. Շահաղիկի աշխատութեան առաւելութիւնն է, որ հողին վրայ գրուած է, ի մերձաւորութեան քաղաքին հինաւուրց յուշակերտներուն: Անշուշտ յուսալի է դեռ այսօր յայտնաբերել Հին Երեւանի մնացորդներէն շատ բան, վերակազմել անոր տեղագրութիւնը, բայց չափազանց պիտի ըլլար պահանջել ալեկարգ վաստակաւորէն, որ բա՛ն ու բրի՛չը ուսին շրջէր անձամբ Երեւանի բաղադրածեւ կածաններէն կամ թափանցեր ամրածածուկ բակերն «հայաթները» եւ վերհանէր վաղափուլ շէնքերու յատակագծերը, մատնացոյց ընէր Հին աղբիւրները, կամ տար